



մարդ՝ բաժանուցին ժողովուրդից եւ գնացին զէպի բանար: Եւ էլ այն- տեղ էի, առաջին շարքում: Յան- կարծ գործեր երեւացին. ժողովուր- դը սկսեց խոստովանել: Նեղ փողոց- էլ ո՞վ էր նայում. կոխ տարով անց- նում էին. եւ էլ ընկալ, բայց տակո մարդ կամ: այնպէս որ, համեմատա- բար: լաւ պիտայ: Գիշ անցաւ եւ ժողովուրդը հանգստացաւ ու սկսեց էլի առաջ գնալ:

Այստեղ արդէն մի սարսափելի բան սկսուեց. Զ նուորներն սկսեցին խը- փել Կնդակները կարկուտի նման է- ին տեղում: Եւ, ընկերոջս հետ հա- զիւ կարողացանք մի քանի մարդ- կանց հետ թագնուել մի թուրքի ա- խոռում: (սանար թուրքի թաղումն է): Վերջը երբ ամեն ինչ վերջա- ցել էր, գուրս եկանք ու դիպնեցին միջոցով անցանք թաղաքի կեդրոնը: Ա՛խ, որքան սպանուած էին. կար եւ մի աշակերտ, վաճառականա- կան դպրոցի՝ բարձրովն ջարդուած. կային ուրիշ աշակերտներ էլ, կա- նայք, աղջիկներ...:

Միւս օրը ոչ ոք փողոց գորս չե- կաւ, որովհետեւ սպասուած էր ռուս «հայրենասէրներին» (խուլիգաններին եւ յուլիգաններին) ցոյցը:

Արդէն առաւօտից սկսած՝ շրջա- պատուած կողակներով այդ հայրե- նասէրները սկսեցին իրանց արշա- ւանքը: Փողոցում հանդիպածին ծե- ծուած սպանուած էին: Սպանում ու ծեծում սուսնեղից նրանց, որոնք խելք զէմք ունէին եւ կամ երկար մալթրի կ հայրերից ոչ ոքի չէին խը- նայում:

Հայրենասէրներին միացել էին մեծ քանակութեամբ թուրք լոթի- ներու Պատահած հային տեղն ու տե- ղը սպանուած էին: Յետոյ սկսեցին հրդեհել հայերի տները:

Վատք նա էր, որ հայերի զէմ կանգնած էին ոչ միայն հայրենա- սէրների այդ խումբանը, այլ եւ կօ- զակները:

Մի օր հսնգստացան եւ միւս օրը աւելի մեծ ամբոխով յարձակուեցին հայերի թաղի վրայ: Այդտեղ խու- լիգաններին մէկը կոտորածի նշան տուաւ՝ ատրճանակ արձակելով:

Այնուհետեւ ամբոխն սկսեց սպան- նել պատահած հային: Կողակներն էլ դրանց հետ միասին: Երեք ժամ շարունակ գիշակներ էին տեղում հայերի տները վրայ: Վերջն էլ նաեւ թ- բերին եւ այրեցին Բալախանսկի եւ Ստանիսլավսկի փողոցների անկիւնի այն ահագին տները, Կրակի միջից ով դուրս էր փախում— կողակները տեղն ու տեղը սպանում էին: Մի կին իրան ցած նետեց պատգամից. իսկ Ակարէստն Անդրէասը ուզում էր դուրս գալ կնոջ եւ երեխաների հետ— կողակները ոչ միայն խփում սպա- նում են, այլ եւ կնոջն ուրեխանե- րի ներկայութեամբ՝ սրերը դիակի փորը կոխում, աղիքները թուրս թափում...:

Ահա ձեզ եւ ազատութիւն... Սարսափ է տիրում ամեն տեղ... Վերջապէս անցեալ օրը ընդհ. նա- հանգապետը հրամայեց սկանգնեց- նելու կոտորածը: Հրամայեց կանգ նեցնել: Լսում եւ մայրիկ... Նրան յայտնել էին որ իր թէ՛ հայերը ռուս բեր են նետել, նա էլ իրաւունք էր տուել կոտորելու... Իսկ յետոյ, ճըշ- տութիւնն իմանալով (այդպէս են ա- սում), հրամայել է որ կոտորածը զադրեցնեն...:

Մարտի 15-ին այն էր, որ երբ խու-

լիգանները լոթիներին հետ յարձակ- ւում էին հայերի վրայ եւ մենք մեր կողմից պաշտպանուում էինք իսկոյն կողակները մէջ էին մտնում, գալիս էր նրանք գեներալը եւ թնդանօթնե- րով ու գնդակներով հալածում էին մեզ եւ մեր տները ու մարտնում:

Իրենք ռուսները, թուրքերն էլ մեծ վնասներ են ստացել եւ դրա հա մար էր որ գնացին նահանգապետի մօտ հայերի հետ, նահանգապետը ոչ այնքան զրանց խօսքերից, այլ նը- բանից, որ յուզումներ էր տիրում նոյն իսկ գործի մէջ, լսելով նաեւ որ թուրքերն իսկ խմբեր էին կազ- մում իրանց լոթիներին եւ խուլիգան- ներին զէմ... հրամայեց զադրեցնել կո տորածը՝ խնդրելով ժողովրդին օգնե- լու իրեն...:

Այսպէս եղաւ օրէջցօր մեր դրու- թիւնը այնքան վատթարանում է, մայրիկ, որ չը գիտենք թէ պիտի ապրենք մինչեւ տեսուելներս...:

ԹՈՒՐԻՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒ- ԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Գրում եմ պարսկական Ջուլֆայից Ուղիղ երեք ամիս է Պարսկաստանից իմ հեռանալը Բայց ի՞նչ է կատար- ուել այդքան ժամանակում մեզ զբա- ղեցնող խնդրի վերաբերմամբ. թուրք ժողովրդի սրամազրութիւնը փոխ- ուած է արդեօք և եթէ փոխուած է, ի՞նչ շարժում Ահա ինչ հարցեր էին ինձ զբաղեցնում: Ոտքս գնելով պարսկական հողի վրայ, եւ ամենից առաջ աշխատեցի բաւարարութիւն տալ իմ հետաքրքրութեանը:

Ջուլֆայում կան թէ՛ հայ պաշ տանները և թէ՛ մանր առևտրով զբաղուողներ որոնք պարուած են ի հարկէ թուրքերի հետ խառն և վեր- ջիններս կազմում են մեծամասնու- թիւն:

Թուրքերի և հայերի յարաբերու- թիւնը նոյնն է. ինչ տեսել եմ երեք ամիս առաջ: Դեռ աւելին կասեմ: Առաջ, Բագուի և Նախիջևանի զէպ- քերի ժամանակ, թուրքերի և հայերի յարաբերութիւնը զգալի կերպով սա- ռել էր, նոյն իսկ թուրքերի մտքերը յուզուելու իսկ այժմ այդ էլ չկայ: Վերջին գէպքերը՝ Բագուի, Ետիշուայ ներկանի եւայլն, ոչ մի յուզումնք չեն առաջացրել այս շրջանում: Եւ այդ բոլորը շնորհիւ կառավարու- թեան բռնած խիստ և համակրելի դիրքի: Այս էլ պէտք է ասել որ թուրք ժողովուրդն էլ սրամազրի չէ և քիչ ու շատ գիտակցող մասը ա- լելի քան համակրութեամբ չէ վե- րաբերում կովկասում առաջացած սրիւնհեղութեան: Ուրախային այն է, որ կառավարութեան և ժողովրդի հետ միացած է նաև կղերը, որը մեծ ոյժ է հեղինակութիւն է ներկա- յացնում Պարսկաստանում, Թէեւ շատ թուրք ազիտատորներ նախի- ջևանից և Երեւանից անցել են այս շրջանը և աշխատել են ժողովրդի միտքը պղտորել և ընդհարում ա- ռաջանել, բայց շնորհիւ վերելում չեցնուած հանգամանքների, ոչ մի յա- ղողութիւն չեն ունեցել, այլ աւելի յուս ընդհանրի սրամազրութեան են ենթարկուել նրանց մտքերով խմոր ուել և սրամազրութեան տեղացիների նման մտածելու:

Ահա ազիտատորների մեծագոյն մասի արդիւնքը. իսկ եթէ գտնուել

են աւելի յանդուգները, որոնք ձրգ- տել են ամեն կերպ մտքերը լարել կառավարութիւնը իր յատուկ կըտ- րուկ պատիժներով լուեցրել է նը- բանց: Իրանը մեզմ. ձ գ ձ գ ու ո ղ և ե ո լ ա տ ա ն ո ղ մ ի ջ ո ճ ն եր չը գ ի տ է: Այս երկրում պատիժը լի- նում է կարուկ և «առաք-տաք», Հէնց այս հանգամանքն է շատ զէպքում զապած պահում թուրք առգիտակից խուժանին, որ միշտ էլ պատրաստ է թալանելու, աւերելու...:

Զգրեմ ի՛նչպէս է ներսը. օրինակ՝ թաւրիզում, Սալմաստում, Ուրմիում և այլն, բայց այստեղ թուրք-հայ կական ընդհարումների մասին չեն խօսում անգամ: Այդ աւելի քան ան- միտ արիւնհեղութիւնները իրանց հետաքրքրութիւնը բոլորովին կոր- ցրել են և բնիկ թուրքերը չեն էլ ուզում լսել կատարուող զէպքերը կուրացած ազիտատորները այնքան սխալ չճշտուած և ծաւրայեղ եղբը- նագործութիւնների մասին են պատ- մել որ նայմ թուրք ժողովուրդը միանգամայն կորցրել է հաւատը զէպի այդ «գրսի գրգող ոյժը»:

«ԱՐՇԱՂՈՅ»

ԿԱՏԱՐԵՆՔ ՄԵՐ ԽՈՍՏՈՒՍԸ

Գ.

Նախորդ յօդուածում փաստե- ցինք որ ես պատրաստ եմ եղել շրջանական ժողովից դեռ եր- կու ամիս առաջ՝ ոչ միայն գրամ. ներք ամբողջովին յանձնել այլ և պարզ խորհրդատուի գերում մնալ գիւանի անդամներից մէ- կի կողքին:

Միլիպէտում որոշեցինք նաեւ շրջանական ժողովի մասնակցե- լու համար ամեն կոմիտէ ան- պայման իր պատգամաւորը ու- նենայ, Այդ առաջարկը զնոյր գլխաւորաբար Պիոնեանն էր և միւս ընկերները և դրա նպա տակն էր որ Կ. կոմիտէի ան- դամներից ոչ ոք պատգամաւոր չըլտարվի. այսինքն վճռողական ձայնից պուրկ լինի, որը և ուղ- ված էր ինձ զէմ...:

Այդ առթիւ կօմիտէներին շրջանական ժողովի հրախորդ կոշնագրի մէջ կայ հետեւեալ պարբերութիւնը.

« Կ ա ն պ ա յ մ ա ն ա մ ե ն ք ա Վ ա ք պ է տ ք է ը ն տ ր է ի ր պ ա տ գ ա մ ա լ ո Ր Ե »:

Վերջապէս Կս և Աղամեանը վերադառնանք Միլիպէից. սկսե- ցինք շարունակել գործը:

Այստեղ աւելորդ չենք համար- ւում յայտնել որ Արեւմտեան Բիւրօն էլ իմ առաջին պահանջի նման կարգադրութիւն էր արել Կ. կոմիտէի անդամների մէջ ծագած վէճերը վերջացնելու համար: Նա էլ Միլիպէ գտնված ընկերներից պահանջել էր որ Վսռա գան, ինչպէս ես էի նա- խապէս առաջարկել, ու երբ ի-

մացաւ որ մենք մի կերպ արգէն համաձայնութեան ենք յանգած, առաջարկում էր այդ խնդրին վերջ տալ բոլորովին, որպէսզի խնդիրը չը գրվի շրջանական ժողովի առջեւ: Այդ առաջար- կին ես պատասխանեցի որ այդ կարող է լինել միայն այն պա- րագայում, երբ ինձ զրպարտող պաշտօնակիցներս ներողութիւն կը խնդրեն ինձնից: Այդ բա- նակցութիւնների միջոցներին էր որ ես չափազանց ազդված Արեւ- մտեան Բիւրօյի երկրի մասին սարսափելի տեղեկութիւններ տուող նամակից, սկսեցի գրել իմ «Իսաց նամակներ» շարքը, որը թէ Բիւրօյին թէ պաշտօնակից- ներիս մեծ դժգոհութիւն պատ- ճառեց, ու սկսվեց «Երաբուժ»-ի և իմ զէմ պրօպագանդան:

Վերջապէս 1905 թ. յունվարի մէջ հաւաքվեցինք շրջանական ժողովի: Դեռ ժողովը չը կայա- ցած, իմ հասած երեկոյին Ռուս- չուքի ընկերները ժողովական- ների համար ընթրիք խրախ- ճանք էին պատրաստել: Հացկե- րոյթի միջոցին Մարգպետունին վեր կացաւ մի ապուշ ճառ ար- տասանեց գրւատեղով դաշնակ- ցական մի քանի ան- դամների, նրանց մէջ մարմնաց- նելով դաշնակցութիւնը. այդտեղ չը հանդուրժելով այդ մըթաբպ լւաքէութեան եւ յայտարարեցի որ Դաշնակցութիւնը կայմում են և բարձրացնում Բարկէնները. Պետօները, և Գնունիները, իսկ պարոնի յիշվածները և նմանները բոլորն էլ շահագործողներ են: «Իսաց նամակներ» յետոյ, իմ այդ կծու յայտարարութիւնը, մանաւանդ որ մի երկու էլ ոչ կուսակցական հիւրեր կային, ամենքին կատաղեցրեց. քիչ էր մնում տուր ու դմբոց առաջա- նար:

Երկրորդ օրը սկսեցինք շրջա- նական ժողովի նիստերը: Ի մեծ զարմանս, Սօֆիաից Միլի- պէցիները, շատ պարզ է բարձ- րագոյն խորհրդով, բերել էին Սօ- ֆիայում գտնվող մի երկուստարգ, իրօք անձնուէր և համակրելի բայց ուրիշ շրջանի գործիչ, առանց դիւանին հարցնելու և առանց այլ ևայլութեան, հէնց գործիչի ներ կայութեանը, որ ոչ մեզ հետ գործ էր ունեցել, ոչ ծանօթ էր մեր երկրի պայմանների հետ, նախագահ ընտրեցին նրան!:

Հասկացանք գործը ինչու մն էր... ժողովակոնների վրա ազ- գելու, ինձ չէզոքացնելու համար էր հրաւիրված պարոնը—բոլո- րովին ապօրինի կերպով առանց դիւանի դիտակցութեանը:

Նոյն նիստում հէնց պարզվեց որ անպայման որոշում առա- ջարկող և տուող Պիոնեանը ա- ռանց այլ ևայլութեան անազնու-



